

---

---

## ՄԻՍՈՆ ՄԻՍԱԿԻ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գրողների միության և Հռոմի «Տիբերինա» ակադեմիայի անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միսոն Միսակի Կրկյաշարյանը ծնվել է 1923 թ. դեկտեմբերի 7-ին Հունաստանի Աթենք քաղաքում՝ Ադանայից և Հաճնից գաղթած ծնողների ընտանիքում: Հայրը՝ Միսակ Կրկյաշարյանը, կաշեգործ-արհեստավոր էր, իսկ մայրը՝ տնային տնտեսուհի: Մ. Կրկյաշարյանը Ադանայից գաղթել էր Կիպրոս, որտեղ էլ ծանոթանում է իր ապագա կնոջ՝ Ազնիվ Իրադյանի հետ: Ամուսնական զույգը 1921 թ. բնակություն է հաստատում Աթենքում, որտեղ էլ ծնվում է ամուլի անդրանիկ որդին, որին մկրտեցին իր պապի անունով՝ Միսոն: 1936-ին նա ավարտում է տեղի յոթնամյա հայկական դպրոցը, և ապագա գիտնականի առջև հարց է ծագում՝ ինչ անել, ինչպես շարունակել

ուսումը, քանզի այդ ժամանակ Հունաստանում տնտեսական և մանավանդ ազգային պատկանելության հարցերն անհաղթահարելի էին: Ընտանիքը չունեի որևէ միջոց որդուն այլ երկրներ ուսումնառության ուղարկելու համար: Առավել մատչելի և հեռանկարային էր հենց Հունաստանում ուսումը շարունակելը, սակայն հայկական բարձրագույն ուսումնական հաստատություններ չլինելու հանգամանքը ստիպում է պատանի Կրկյաշարյանին դառնալ հունական դասական գիմնազիայի աշակերտ: 1943-ից գործուն մասնակցություն է ունենում Հունաստանը բռնագրաված իտալա-գերմանական զավթիչների դեմ սկսված դիմադրական շարժմանը՝ գլխավորելով երիտասարդական ընդհատակյա կազմակերպությունը: Դրան զուգընթաց՝ անդամակցում է Աթենքի Գոկիմիա արվարձանում կազմակերպված գրական խմբակին, որը վճռորոշ նշանակություն է ունենում նրա հետագա գրական գործունեության համար: 1944 թ. վերջին ընդունվում է Աթենքի Կապոդիստրիասի անվ. ազգային համալսարան, որտեղ սովորում է մինչև 1947 թ. Խորհրդային Հայաստան հայրենադարձվելը: Այս ընթացքում քաղաքական-հասարակական բուռն գործունեություն է ծավալում Աթենքի հայկական համայնքում՝ որպես «Նոր կյանք» առաջադիմական օրաթերթի աշխատակից և խմբագիր՝ «Քառամ» կեղծանունով: Մեծ նպաստ է բերում Հունաստանում ծավալված հունահայերի հայրենադարձության կազմակերպման գործին և արդեն 1947 թ. վերջին որպես կարավանապետ իրականացնում է 2750 հունահայերի վերադարձը հայրենիք: Ընտանիքը սկզբում հաստատվում է Լենինականում, ապա տեղափոխվում Երևան:

Հայրենադարձվելը շրջադարձային եղավ երիտասարդ Կրկյաշարյանի կյանքում: Սկզբնական տարիներին զբաղվում է մանկավարժությամբ՝ որպես պատմության ուսուցիչ՝ աշխատելով մայրաքաղաքի տարբեր դպրոցներում: Դրա փորձը նա ուներ դեռևս Հունաստանում ապրած տարիներից: 1948 թ. երիտասարդ Մ. Կրկյաշարյանը հանդիպում է իր ապագա կնոջը՝ բանաստեղծուհի Արշալույս Մարգարյանին, իսկ 1951-ին ամուսնական

գույգը երջանկանում է Արտաշես զավակով: 1950 թ. ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվ. մանկավարժական համալսարան: Ուսանողական տարիներին բացահայտվում են գիտական աշխատանքով զբաղվելու նրա հակումները: Գիտական զեկուցումներն ուղղված են եղել հայ ժողովրդի պատմության հիմնահարցերի բացահայտմանը, որոնցից էին Ձեյթունի 1862 թ. ապստամբությունը, Ս. Մյանդարյանի հայացքները և այլն: Բուհը գերազանցությամբ ավարտելուց հետո որոշ ժամանակ ևս պատմության առարկա է դասավանդում հանրապետության գյուղական շրջանների դպրոցներում՝ միաժամանակ զբաղվելով նաև գեղարվեստական գրականության թարգմանությամբ: Նրա անդրանիկ թարգմանությունը Ալ. Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» պոեմն էր հայերենից հունարեն՝ կատարված դեռևս Հունաստանում, որտեղ լույս էր տեսել նաև նրա առաջին գրական երախտայրիքը՝ «Ցայգալույս» հունարեն բանաստեղծությունների ժողովածուն: Ս. Կրկյաշարյանը 1956 թ. սկսում և 1957-ին ավարտում է Հոմերոսի «Ոդիսական» պոեմի չափածո հայերեն թարգմանությունը, որն արժանանում է արվեստասեր հասարակայնության բարձր գնահատանքին: 1959 թ. անդամագրվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրա՝ ուսումնասիրությունն անցկացնելով Լենինգրադի համալսարանի Հունաստանի և Հռոմի պատմության ամբիոնում: Աշակերտել է համաշխարհային անուն վաստակած պրոֆեսորներ Հ. Օրբելուն, Վ. Մտրուվեին, Բ. Պիտրովսկուն և այլոց: Այդ տարիներին հենց Լենինգրադում հրատարակում է իր առաջին գիտական հոդվածը՝ «Возникновение городов в Армении во II в. до.н.э – III в. н.э» վերնագրով, որով գրավում է Ռուսաստանի անտիկ շրջանով զբաղվող պատմաբանների ուշադրությունը: 1962 թ. վերադառնում է Հայաստան, ընդունվում Ակադեմիայի պատմության ինստիտուտ՝ զբաղեցնելով Հին և միջին դարերի պատմության կրտսեր գիտաշխատողից մինչև բաժնի վարիչի պաշտոնները: Այստեղ նա հասունանում է որպես հայագետ աղբյուրագետ և հելլենագետ: Աշխատում է անվանի հայագետներ Ս. Երեմյանի, Հ. Անապյանի, Գ. Մարգարյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Գ. Տիրացյանի և այլ պատմաբանների հետ: 1963 թ. պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ «Հելլենիստական թագավորների փոխհարաբերությունները Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքների հետ» թեմայով, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1980 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Հին Հայաստանի պետական կառուցվածքը» թեմայով: Ս. Կրկյաշարյանի պատմագիտական ուսումնասիրությունների շրջանակները ներառել են հելլենիստական քաղաքների, Հին Հայաստանի պետական կառուցվածքի, սոցիալ-քաղաքական պատմության, հայ-հունական, հայ-հռոմեական, հայ-պարսկական հարաբերությունների ոլորտները՝ սկսած մ.թ.ա. VI դարից մինչև Հայաստանում Արշակունյաց թագավորության անկման շրջանը, հայոց արքաների տիրոջսաշարի, արքայատոհմերի հաջորդականության, հայոց բանակի կազմավորման և այլ հարակից հարցերի շուրջ: Հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների հիման վրա նա անդրադարձել է հին հայկական քաղաքների սոցիալական կազմին, թագավորների և բնակչության տարբեր խավերի փոխհարաբերություններին, պետական կառուցվածքի կազմավորմանն ու զարգացմանը, նախարարությունների ու գործակալությունների բնույթին, քաղաքների վերաբնակեցման՝ սինոլիսմոսի, լիտուրգիա երևույթի հարցերին:

Ս. Ս. Կրկյաշարյանի գիտական գործունեության մի ուրիշ ասպարեզ էլ անտիկ հույն հեղինակների (Հոմերոս, Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Դիոն Կասիոս, Հովսեպոս Փլավիոս, Պլուտարքոս) դասական գործերի հայերեն թարգմանություններն են՝

առաջարկներով և ընդարձակ ծանոթագրություններով, որոնցով հիմք դրվեց ՀՀ ԳԱԱ հրատարակչությամբ լույս տեսնող «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի «Հին հունական աղբյուրներ» շարքին: Գեղարվեստական գրականությունից թարգմանել է հույն դասական հեղինակների պիեսներ (Սոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես), որոնք բեմադրվել են հայաստանյան թատրոններում. օրինակ՝ Եվրիպիդեսի «Բփիգենիան Ավլիսում»՝ Գ. Սունդուկյանի անվ. ակադեմիական թատրոնում, Սոփոկլեսի «Անտիգոնեն»՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, Արիստոփանեսի «Լիսիստրատեն»՝ Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնում: Ժամանակակից հեղինակներից անդրադարձել է Վառնալիսին, Ալեքսանդրոպուլոսին, Պանսելինուին, Ստիլիանոս Պապադոպուլոսին և Լեոնիդաս Պանդելիդիսին:

1968-ից Կրկյաշարյանն անցնում է դասախոսական աշխատանքի. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, Էջմիածնի հոգևոր ճեմարանում՝ դասավանդելով հին հունարեն, հունա-հռոմեական աղբյուրներ և հայոց պատմություն: 1977 թ. ընտրվում է ՀՀ գրողների միության անդամ: Բեղմնավոր թարգմանական գործունեության համար 1986 թ. հոկտեմբերին արժանանում Ե. Չարենցի անվ. գրական մրցանակի, նոյեմբերին ընտրվում է Հռոմի գրականության և արվեստի «Տիբերինա» ակադեմիայի արտասահմանյան անդամ, 1994 թ.՝ Փարիզի «Արարատ» գիտամշակութային ակադեմիայի, իսկ 2000 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2003 թ. պարգևատրվում է ՀՀ գրողների միության և Մբ. Էջմիածնի «Կանթեղ» թարգմանչական մրցանակով, իսկ 2005 թ.՝ Մբ. Էջմիածնի «Մբ. Սահակ և Մբ. Մեսրոպ» շքանշանով:

Մինչև կյանքի վերջին օրը Ս. Կրկյաշարյանը շարունակում էր աշխատել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում և կատարում թարգմանություններ, դասավանդում էր ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում: Նրա թարգմանած վերջին գիրքը, որը մնաց անավարտ, Օմերոս Մայպիդիսի «Ազնիվ» վեպն էր:

Անավարտ մնացին նաև նրա շատ մտահղացումների իրականացումն ու գիտական և մշակութային շրջանառության մեջ ներդնելը: Բայց այն ամենը, ինչ արեց Միմոն Կրկյաշարյանը իր գիտական ու ստեղծագործական կյանքում, վկայում է իր ստեղծած խոշոր վաստակի և մնայուն արժեքների մասին:

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ**